

Բ. ՆԱՆՆԵԱՅ ՎԱՅՈՒԹԻՒՆԲ

6. Ղազար Փարպեցու Ա. Դրուագը, ինչպէս ակնարկած եմ այլուր³ հարեւանցի եւ պիտի ապացուցանեմ մօտաւոր ապագային, անհարազատ է Ղ. Փարպեցու անուան եւ կեղծիք մըն է Բ. դարու Ա. կէսին հրատարակի վրայ դրուած: Ըստ այսմ այն պարագան որ Տեսիլքս տեղ գտած է Ղ. Փարպեցու այս Դրուագի մէջ, հարկ է նկատի առնել իրբեւ ըմբռնում Բ. դարու առաջին կէսին:

7. Սահակի Տեսլեան մասին ակնարկութիւն մ'ունինք Շահապիլիանի Ժողովոյն սահմանած կանոններու Նախարանին մէջ, ուր կ'ըսուի⁴. «Յետ փոխելոյ յերկրէս վարդապետացն Հայոց... Սահակայ եւ Մեսրոպայ... լինէր եղծումն եւ քակտումն եւ քայքայումն կարգաց եւ օրինաց սրբոյ եկեղեցույ, որպէս եւ տեսաւէր ի Տեսլեանն յառաջագոյն սուրբ քահանայապետն տէր Սահակ կամ եւս յառաջ սուրբն Գրիգորիոս»:

Սահակի Տեսլեան մէջ եկեղեցական կարգերու «եղծման եւ քայքայման եւ քակուման» մասին ուղղակի խօսք չէ եղած. ակնարկուած է սակայն «ծիփումն արեւմտեան աշխարհիս Հայոց»: Չկայ որ եւ է պատճառ ենթադրուած թէ 438—450 շրջանին, երբ հայրապետական աթոռին վարչութիւնը Յովսէփ երիցու ձեռքն էր, եկեղեցական կարգերն որ եւ է խանդարման ենթարկուած ըլլան: Նաեւ Տեսիլքը կ'ենթադրէ Եկեղեցույ դրութիւնը պայծառ վիճակի մէջ: Նախարանին հեղինակը նկատի ունի հաւանորէն 452—484 (թերեւս նաեւ 570—590) շրջանը: Ժողովքը դրամարուած է 444 կամ 448 տարւոյն: Հ. Գաթրըճեան այս տեղիքն ակնարկելով կը գրէ. «Կը ճանչնայ զայն (Տեսիլքը) նաեւ Յունական Կանոնաց Թարգմանիչը Ե. Բորդիին վերջը կամ ի սկզբան Զ. ին» (Սրբազան Պատարագամատոյցք, էջ 306): Ինձ կը թուի, սակայն, թէ Նախարանս աւելի անագան ժամանակի կը վերաբերի, առ կանուխ Բ. դարու սկզբին:

8. Ղ. Փարպեցի իւր առ վահան գրած թղթին մէջ կը գրէ (203). «Իսկ զյառաջագոյն գրելոցս (կարգալ՝ ընդրելոցն) սուրբ արանցն, զորս ի Պատմութեան (կարգալ՝ զորս եւ Պատմութիւնն) նահատակին Գրիգորի (այսինքն՝ Պատմութիւնն Փաւստեայ Բիւզանդեայ) դրոշմեալ յիշատակէ, զի՞նչ

եւս ասացից. դարգար եւ դարժանաւոր բարեպաշտ կաթողիկոսէն՝ զսրբոյն Ներսիսէ եւ զԿրօնաւոր⁵ առաքինւոյն եւ զմեծ լուսաւորչէն Հայոց գտէր Սահակայ եւ զայլոց բազմաց, որոց ոչ բացեալ ի բարեբան (կարգալ՝ ի բարի բան) դրերանս իւրեանց ի վերայ աշխարհիս այսորիկ՝ վախճանեցան»:

«Պատմութիւն նահատակին Գրիգորի» Ղ. Փարպեցու ըմբռնմամբ (Ազաթանդեայ եւ) Փ. Բիւզանդեայ Պատմութիւնն է: Արդեամբք ալ խօսք եղած է հոն Ս. Ներսիսի «եւ այլոց բազմաց», այսինքն Դանիէլի եւ Յուսկան մասին, որոնք իրենց վախճանումէն յառաջ շատ աննպաստ արտայայտուած էին Հայոց աշխարհի ապագայի մասին: Բնականաբար ի Պատմութեան նահատակին Գրիգորի չէր կրնար խօսք եղած ըլլալ Ս. Սահակի մասին. եւ արդէն «զկրօնաւոր առաքինւոյն եւ զմեծ լուսաւորչէն» արտայայտութիւնը Սահակի հասցէին՝ անագանագոյն ժամանակի կը պատկանի. առանց տարակուսի Ա. Դրուագի հեղինակէն մուծուած Ղազարի թղթին մէջ: Ընդգծուած տողերուս ներմուծողը սակայն աչքի առաջ ունէր Տեսիլքս, երբ կը գրէր տողերս: Այս ներմուծումը պէտք է տեղի ունեցած ըլլայ Բ. դարու առաջին կէսին: Ղ. Փարպեցի ինքնին անձանօթ էր Սահակի Տեսլեան, ինչպէս կարելի է հետեւցնել հետեւեալ տեղիքէն, ուր Գրիգորի Տեսլեան խօսքերը մերձեցնելով 451ի դէպքերուն կը գրէ. «Յորոց ձեռն սկիզբն առեալ զայր տակաւ յերեւումն կանխաւ տեսութիւն մարգարէական սուրբ նահատակին Գրիգորի Տեսլեանն, որ երեւեցաւ նմա յԱստուծոյ...» (էջ 42): Եթէ ծանօթ ըլլար իրեն Սահակի Տեսիլքը, առանց տարակուսի պիտի չանտեսէր յառաջ բերել նոյն Տեսիլքին համապատասխան տեղիքն ալ:

9. Ունինք յունարէն գրուածք մը, «Կաթողիկոսունք Հայոց» խորագրուած⁶, ուր խօսուելով Ս. Սահակի մասին կ'ըսուի. «Յայնժամ պատմեաց նոցա (նախարարացն Հայոց) զՏեսիլն զոր ետես վասն կործանման նոցա, որ եղեւ եւ լինիցի»: Այս գրուածքը յօրինուած է առանց տարակուսի Բ. դարու առաջին կէսին. հեղինակը ծանօթ եղած է Տեսլեանս այնպէս, ինչպէս աւանդուած է Ղ. Փարպեցու Ա. Դրուագին մէջ:

10. Մովսէս Խորենացի իւր «Հայոց Պատմութեան» մէջ, Գ. 66, կը գրէ.

Շամուէլ կեցեալ ամս Ե. մեռանի ի մեքում աշխարհիս:

Յայնժամ ժողովեալ ի միասին ամենայն նախարարացն՝ չողան առ մեծն Սահակ եւ զմեղանս յանձն առեալ՝ աղաչէին զնա դարձեալ ունել զաթոռն. յառաւանային ի Պարսից արքայէն հաստատել զնա, մուրհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն: Այլ նա ոչ առնոյր յանձն. եւ ի բազում քաջամտից անցաւ հարկաւորեալ՝ պատմեաց գտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա ի քուն ապագայիցն յայնուրիւն: Զոր լուեալ նախարարացն եւ զիտացեալ, թէ յաստուածային հրամանէ դարգարեաց յազգէ նորա քահանայապետութիւնն՝ յարտասուս հարեալ աւագելով զինքեանս, ըստ Աւետարանին բանի, թէ Հարկ է գալ գայթակղութեանն, բայց վա՛յ այնոցիկ (!), ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւնն. թոյլ ետուն նմա» (?): Մովսէս Խորենացի աչքի առաջ ունեցած է հոս Տեսիլքս իւր Յառաջարանովն եւ Վերջարանովն, ուրիշ խօսքով Ղ. Փարպեցու Ա. Դրուագը այժմեան կերպարանքի մէջ: Ընդգծուած բառերը քաղուած են Կեղծ Ղազարի Ա. Դրուագէն: Բայց Խորենացու յաւելումն է «մուրհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն». այսինքն հայրապետական աթոռին ժառանգ կարգել Մամիկոնեանները:

11. Յովհաննէս Դրասխանակերացի իւր Պատմութեան մէջ թէպէտ աչքի առաջ ունի Ղ. Փարպեցու Ա. Դրուագը, զիտէ թէ «մեծն Սահակ յետոյ աղաչեցեալ ի նախարարացն՝ ոչ առնոյր յանձն կրկին առաջնորդ լինել նոցա, սակայն ոչինչ կասէր միշտ զհոգեւոր կաթն զիեցուցանել մանկանց եկեղեցույ» (էջ 57, տպ. Աղանեանց), ուստի Տեսլեան Յառաջարանին եւ Վերջարանին ծանօթ է Ղազարէն, սակայն խոստափած է ակնարկութիւն մ'իսկ ընել Տեսիլքի մասին: Յովհ. Պատմարան սիրող չէ Տեսիլքը. անիկա Պատմարան պահած է նաեւ Ս. Գրիգորի Տեսլեան եւ Դանիէլի, Յուսկան եւ Ներսիսի գուշակութիւններու մասին:

12. Տեսլեան ծանօթ է նաեւ Թովմաս Արծրունի (74). ուշագրաւ են իր տողերը. «Իբրեւ վախճան առնոյր կարգ[եալ] եպիսկոպոսացն որ ի Պարսից, որք առանց եպիսկոպոսին Կեսարու ձեռնադրեցան յԵրան[եալ] եպիսկոպոսէ, միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ, անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կայցի զաթոռ հայրապետութեանն. եւ խոստանային զնալ ըստ հրամանի նորա: Զոր ոչ առ յանձն լսել նոցա: <եւ պատմէր նոցա> զհանգամանս Տեսլեանն, զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր. զբանալ եպիսկոպոսապետութեանն եւ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, եւ զկարգապետել անարժանիցն եւ զընտրութիւնն սրբոց, եւ դարձեալ զնորոգումն հայրապետութեանն եւ զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր. զոր ետես ի մեծի հինգաբարժոյն»:

13. Գրիգոր Մագիստրոս իւր առ Վարդապետն Սարգիս թղթին մէջ (էջ 55) կ'ակնարկէ միայն. «Կամ ըստ մերոյն Տեսլեանն ի սահակայ սրբոյ եւ քահանայապետի»:

14. Ստեփանոս Ասողիկ. «Մեծ քահանայապետն Սահակ... սա է, որ նախ քան զքահանայապետութիւնն ետես ի գիշերի Տեսլեան զբանալ թագաւորութեանն Արշակունեաց եւ զդարձեալ քահանայապետութեանն յազգէն սրբոյն Գրիգորի եւ այլոց ոմանց զկարգն վիճակել. իսկ ի վախճան ժամանակի անդրէն, ասաց, դարձեալ զյառնել թագաւորութեանն եւ զնորոգել քահանայապետութեանն ի նոցունց ազգաց սահմանեալ ժամանակաւ» (էջ 75—76, հրատ. Մալխասեան):

15. Ներսէս Կրայցի ի Վիպասանութեան⁷ կ'երգէ.

«Եւ ըլլա՞սակ սուրբն մերժեալ որ այսմ իրի ոչ հաղորդեալ. Որում փոխան Սուրմակ նըստեալ, եւ Բարդիշու զնա յաջորդեալ: Այլ նախարարքն զըզջացեալ, առ հովուապետն քաղցր եկեալ. Աղերսական բանիւ մաղթեալ, լինել տեսուչ նոցա դարձեալ: Սակայն սրբոյն ոչ յանձն առեալ, այլ զհրաշալին Տեսիլ պատմեալ.

³ Հանդ. Ամս. 1935, էջ 459:
⁴ Հայապատում, Բ., § 127 (էջ 351 մեծադիր հրատ.):

⁵ Կարգալ՝ «եւ գորդոյ նորա գառաքիւնոցն»:
⁶ Migne, Patrologia graeca, t. 132, p. 1237—1258.

⁷ Տեսն Ներսիսի Շնորհաւոյ Բանք չափաւ: Վեներիկ 1830, էջ 535—536:

Թողրկոսն Վերապեցի: Եւ այս էր սող եւ կէս սակին, որ հետի էր յեղծեալ եւ ի ջնջեալ գրէն: Եւ գրեալ սող մի սակի եւ կէսն կարմիր. զի յձմեռածին կաթոլիկոս նստաւ եւ մտաք յսկէգիրն եւ ելաք յեղծեալ գրէն եւ ջնջեալ տառէն: Եւ ամենայն անէծք եւ նոյնք... ի յօրհնութիւն փոխարկեցաւ:»

Հետաքրքրական է որ «եօթն սող սակին» համեմատուած է «Կիրակոս» անունն եօթը գրերուն հետ. կէս մը, որ օտար է Տեսլանն:

(Շանուհակիի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԺԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՅՈՒՊՈՒՅՈՒՄ ԳՆՏՄՈՒԹՆՆԵՐ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻՒՔԵՍԻՐՃԵԱՆ

(Շարունակութիւն:)

Երեմիա Զելեպի այսպէս՝ Ներսէսի կղզին եւ Փիլիպպոս կաթողիկոսին Կ. Պոլիս գալը ու անոր հետ իր ալ Պուրսա երթալը յիշատակել յետոյ, կը վերադառնայ Կ. Պոլիս եւ զարձին՝ կը թուէ տեսնուած գիւղերն ու աւանները եւ ասոնց հետ՝ իշխանաց կղզիները՝ սապէս.

Տաղ 227.

Գրբըլ՝ Հէյպէլի՝ Սիվրի, Գրնալի՝ Պուրղազ եւ Դաւառն Ուրայն անուանք են կղզեացս՝ Մէջ սոցա եւ Պէոյիւկ ատան:

Սարգիս Դպիր Սարաֆ-Յովհաննէսեան ալ իր Պուրսական պտոյտին վերջընթեր էջին վրայ կը նշանակէ այս կղզիները իրենց անուններով՝ սապէս.

«Եւ ի Ֆէնէր Պաղչէսիէն տեսանին մօտակայ կղզիքն ի մէջ ծովուն, որոց անուանքն են քուրքերէն Գրնալը, Սիվրի ատա, Պէոյիւք ատա, Եաւր ատա, Պուրղազ ատա, Դաւառն ատա, Գրբըլ ատա, եւ Հէյպէլի, եւ կըղզին Ներսէսի»:

Երեմիա եւ Սարգիս Դպիր միեւնոյն կարգաւ չեն ներկայացունէր կղզիներուն անունները, բայց փոյթ չէ, եւ պէտք է որ պտոյտ մը ընենք անոնց մէջ, զի հայկական յիշատակներ եւ բնակչութիւն կը գտնանք հոն:

Թողրով Ներսէսի կղզին, որ, կը կրկնեմ, Եաւր (տափակ) կոչուածն է, եւ որու վրայ խօսեցանք, նկատի կ'առնեմ նախ Գրնալը կամ Բոօքի կղզին, որ նաեւ էրմէնի Ատաի (Հայու կղզի) անունը կը կրէ, որովհետեւ վաղուց՝ Հայեր միայն սկսած են բնակիլ հոն, գրաւելով ամբողջ ծովեզրը եւ բարձունքը:

Ի սկզբան մատուռ մ'ունեցած են հոն Հայերը, բայց յետոյ՝ Յակոբ Պատրիարքի օրով կառուցած են քարուկիր գեղեցիկ Եկեղեցի մը, որուն ճակատը կը կարդանք հետեւեալ Արձանագրութիւնը, զոր քաղած եմ անձամբ 1900ին.

ԿԱՌՈՒՅԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ
ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐՁԻՆ,
Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
ՏԵԱՌՆ ՅԱԿՈՒԱՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1857 ՍԵՊՏ. 22

Սիրուն Եկեղեցի մ'է Գրնալի Եկեղեցին. անոր առաջին Քահանայն եղած է Տէր Դիոնեսիոս, որ միանգամայն իւրովսանն կը կրթէր է գիւղին մանուկները:

Ճանչցած եմ զինքը իր ծերութեանը մէջ, բարի, անձուէր, եւ անշահախնդիր քահանայ մ'էր, վախճանած է ի խոր ծերութեան 16/29 Յունիս 1912ին, որու մասին Բիւզանդիոն թերթը կը գրէր հետեւեալը, զոր Գրնալը կղզիի հայութեան ամբողջ պատմութիւնը կարելի՞¹⁸⁶ է համարել:

«Երէկ գիշեր Գրնալը կղզիին մէջ վախճանեցաւ աւագերէց Տ. Դիոնեսիոս Ա. քահանայ, որ Կ. Պոլսոյ քահանայական դասուն աւագագոյն անդամն էր թէ՛ իր տարիքով եւ թէ՛ ձեռնադրութեան կարգովը: Վախճանեալ քահանան առաջին հիմնադիրներէն մին եղած է կղզիին Հայ բնակչութեան եւ անոր զարուցին ու եկեղեցւոյն: Անցեալ դարուն յիսուական թուականներուն երբ քանի մը Հայեր Գրնալը բնակիլ ընելու գաղափարը կը յղանան եւ արտօնութիւն ձեռք բերելով տուներ կը շինեն, իրենց առաջին գործերէն մին կ'ըլլայ եկեղեցւոյ մը հիմ դնել: Միեւնոյն ատեն գաղափար կ'ունենան զարուցի մը կազմակերպութեան եւ իբր մանկավարժ Պատ. Ճիզմէճեանը Սամաթիայէն տեղափոխելու Գրնալը: Հոն, անիկա առաջին դասարանը կազմած է, հնօրեայ ծառի մը տակ, փոքր մանուկներն իր շուրջը ժողովելով եւ անոնց կարգալ սով-

¹⁸⁶ Բիւզանդիոն, Թիւ 4641, 17/30 Յունուար 1912:

րեցնելով: Երբ քիչ ետքն եկեղեցին ալ կառուցուած է, անձուէր վարժապետը կոչուած է նաեւ հովուութեան, 1857ին նորաչէն եկեղեցւոյն վրայ քահանայ ձեռնադրութիւնով: Տ. Դիոնեսիոս քահանայ խղճմտութեամբ շարունակած է երկար տարիներ թէ՛ հովիւի եւ թէ՛ ուսուցիչի կրկնակ պաշտօնները, այս փոքր կղզիին մէջ, առանց հետամուտ ըլլալու աւելի ճոխ պաշտօններու եւ աւելի պերճ թաղերու: Վերջերս, աչքերը տկարացած էր, սակայն միշտ իր պարտքը կը կատարէր, Կիրակի օրերն եկեղեցական պաշտամանց ներկայ գտնուելով եւ զոց արտասանելով բոլոր աղօթքներն եւ ընթերցումները: Ինք Գրնալի կազմակերպութեան առաջին վկան եւ գիւղին նահապետն էր»:

Ինչպէս սոյն տողերէն կ'երևի, Տէր Դիոնեսիոս նախ ծառի մը շուրջն տակ կը ժողովէ եզեր գիւղին տղաքը, բայց յետոյ՝ երբ Հայ բնակչութիւնը շատնալ կը սկսի հոն, կը կառուցուի Ս. Ներսէսեան անուանով երկսեռ վարժարան մը¹⁸⁷, որ քանի մը տարի առաջ այրեցաւ:

* * *

Եկեղեցւոյ աջ ու ձախ գաւթիին մէջ կան մէկ մէկ պատկեր, որոնք 1859 Դեկտեմբեր 9 թուականը կը կրեն եւ ստորագրուած են՝ «Պատկերիան Անանիա Խաղաղիւղի» կողմէ: Ասոնցմէ զատ տաճարին մէջ ալ կան՝ «Խաչելուքեան» մեծ պատկեր մը՝ 1852 թուականու, եւ «Ս. Աստուածամայ» փոքրագիւր նկար մը, 1830ին Սամաթիա գծուած, զոր 1919ին նուէր կու տայ ծանօթ գրագէտ Յ. Գ. Մրմրեան, ինչպէս գրուած է վրան:

Գիւղը ունի իւր Գերեզմանատունը ծառագարդ ու ծաղկաղարդ, որ կը գտնուի Եկեղեցւոյն ճիւղ ետեւը եւ ուր կը հանգչի վերջիչեալ բազմերախտ Քահանայն՝ Տէր Դիոնեսիոս:

Բայց այս Գրնալը (կամ Բոօթի) կղզին՝ Քաղկեդոնի պէս Բիւզանդահայ պատմութեան մէջ ունի էջեր:

Այսպէս՝ վարդան անուն Հայը, որ 803ին ինքզինքը կայսր հռչակած էր, անյաջողութեան հանդիպելով կը քաշուի Բոօթի կղզին եւ հոն իւր շինել տուած վանքին մէջ կը սկսի ձգնիլ ու պարապիլ երկրագործութեամբ, բայց թշնամիները զինքը հանգիստ չեն թո-

¹⁸⁷ Տարեցոյց Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին, 1901, էջ 245:

ղուր, կ'երթան կը բռնեն ու աչքերը կը կուրցունեն 804ին, եւ սղոպէս կայսր աչքով կը վերջացնէ հոն իր օրերը¹⁸⁸:

Նոյնպէս Լեւոն Ս. Հայկազնը, որ «Մեծ կայսր» արտոսը վայելց եւ թագաւորեց 813—820, չարաչար կը սպաննուի եւ կը թաղուի կղզիին գաղաթը գտնուած Յունական վանքը¹⁸⁹, ուր անոր գերեզմանատեղին՝ իբրեւ թէ Հայագէտ Չօլաղիտէս 1867ին ցոյց տուած ըլլայ կղզեքանակ աղագայիններու:

Կ'ըսուի թէ Բիւզանդահայ կայսրուհիներ ալ հոն թաղուած ըլլան ժամանակին, բայց ո՞ր աստիճանի ստոյգ է այս, կը վարանիմ զիտնալ:

Գրնալըն յետոյ կը գտնուի Պարկազ (կամ Անթիկոնի) կղզին, ապա Հէյպէլի (կամ Հալքի) անուն բաւական մեծ կղզին, երկուքն ալ յունարեան: Միայն թէ այս կղզիներէն ալ երկրորդին մէջ կան չորս հատ հայերէն արձանագրութիւն՝ 18րդ դարու վերաբերեալ, որոնք կը գտնուին այդ տեղի Յոյն Աստուածարանական Դպրոցի Եկեղեցին, եւ հրատարակուած են Կ. Պոլսոյ «Մաղիկ» թերթին մէջ¹⁹⁰:

Սոյն Արձանագրութիւններուն առաջինը փորագրուած է պարտէզին մէջ գտնուած Ջրհորի մը բերանը ծածկող կլորակ քարի մը վրայ սապէս.

ԱԿՆԱՅ ԳԵՂԵՆ ԶՕՐԷՑԻ ԼՈՒՍԱՌՈՐԻ ՄԱՀՏԵՍԻ
ՄԻԵԱՅԵԼԻ ՈՐԳԻ ՄԱՀՏԵՍԻ ՆԻԳՕԼԱՅԻՆ ՅԻՇԱՍԱԿՆ Ե. 1792 ՍԵՊՏ. 25:

Միւս երեքը կը գտնուին եկեղեցւոյն մէջ՝ Նախ՝ խորանը ծածկող փայտեայ վարագոյրին երկու կողմը կանգուն պղնձի խոշոր աշտանակներուն մէկ հատին վրայ՝

ՅԻՇԱՍԱԿ Ե ԱՅՍ ԲԱՐԵԱՅ ԱՇՏԱՆԱԿՐՍ ՄԱՀՏԵՍԻ ԵՂԻԱՅԻ ՈՐԳԻ ՅԱԿՈՐԻՆ ԹՎԻՆ ՈՄԻԱ (1772):

Յետոյ՝ Երրորդութեան պատկերի մը վրայ՝

ՊՈՒԵՇԱՏԱԿ (Իմա՛ այս յիշատակ) ԵԿԻՆԻ ԶՕՐԱԿԼԸ ՀԱՃԻ ՄԻՔԱՅԵԼԸ ՀԱՃԻ ՍԱՀԱԿ ՀԱՃԻ ՄԵԼԻՔԻ ՌՄԻԵ (1778):

Իսկ Չորրորդը՝ Աստուածածնի պատկերի մը վրայ՝ սապէս.

¹⁸⁸ Հ. Կ. Տէր Սահակեան, Հայ կայսերք Բիւզանդիոնի, Ա., էջ 158:
¹⁸⁹ Անդ. Ա., էջ 194 եւ Բ., էջ 346:
¹⁹⁰ Մաղիկ, Կ. Պոլիս, Գ. տարի, Թ. 32, 11 Սեպտեմբ. 1893:

